ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի հունիսի 25-ին, ժամը 19.00-ին, Երևանի քաղաքապետարանում՝ Երևանի Արգիշտի 1 հասցեում, տեղի ունեցավ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 4-րդ նիստը, որին Խորհրդի 20 անդամներից մասնակցում էին 13-ը:

Նիստը վարում էր Խորհրդի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը ներկայացրեց 4-րդ նիստի հաստատված օրակարգի երեք կետերը, ինչի վերաբերյալ Խորհրդի անդամ Տիգրան Ավագյանը առաջարկեց օրակարգի հարցերի հերթականությունը տեղափոխել՝ Երևան քաղաքում տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդի ծավալի սահմանափակման առաջարկի վերաբերյալ երրորդ հարցը քննարկել Նիստի սկզբում: Առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Տիգրան Ավագյանը՝ որպես առաջարկի հեղինակ, իր մտահոգությունը հայտնեց հատկապես քաղաքի կենտրոնական փողոցներում և ուսումնական հաստատությունների շրջակայքում տեղադրված տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդային վահանակների ծավալի վերաբերյալ և որպես օրինակ ներկայացրեց օրեր առաջ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվող միջոցառման շրջանակներում Երևանում կազմակերպված «City tour»-ի ընթացքում վիճակախաղերի մեծածավալ գովազդային վահանակների՝ հյուրերի շրջանում առաջացրած հետաքրքրությունը, ինչը վկայում է այն մասին, որ զբոսաշրջիկները ևս կարող են ներգրավվել այդ ոչ ցանկալի գործընթացին:

Խորհրդի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը՝ կիսելով Խորհրդի անդամի մտահոգությունը սույն հարցի վերաբերյալ, փաստեց, որ խնդիրը բազմիցս արծարծվել է նաև քաղաքապետարանում՝ պատասխանատու պաշտոնյաների շրջանում: Խնդրի լուծումը միանշանակ չէ՝ մի կողմից երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակով պայմանավորված հարկային մուտքերը համայնքային բյուջե խիստ անհրաժեշտ են, մյուս կողմից նմանատիպ գովազդի բացասական ազդեցությունը դեռահասների և

երիտասարդների վրա ակնհայտ է: Միևնույն ժամանակ պատրաստակամություն հայտնեց վերը նշված մտահոգությունը փոխանցել Երևանի քաղաքապետին:

Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանն առաջարկեց Խորհրդի անունից նշված խնդրի առնչությամբ կազմել փաստաթուղթ և ներկայացնել Երևանի քաղաքապետին: Միաժամանակ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված տեղեկատվությունը տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդի ծավալի վերաբերյալ՝ ըստ վարչական շրջանների.

Աջափնյակ վարչական շրջան – 219.3մ²

Ավան վարչական շրջան - 64.52մ²

Արաբկիր վարչական շրջան - 220մ²

Դավթաշեն վարչական շրջան – 151.62մ²

Էրեբունի վարչական շրջան - 6.14մ²

Կենտրոն վարչական շրջան - 1898մ²

Մալաթիա - Սեբաստիա վարչական շրջան - 10մ²

Նոր Նորք վարչական շրջան – 202.4մ²

Շենգավիթ վարչական շրջան – 2.6մ²

Քանաքեռ - Զեյթուն վարչական շրջան - 27.68մ²

Նորք - Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում ընդհանրապես չկան տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդային ցուցանակներ:

Ծավալված քննարկման ժամանակ Խորհրդի անդամներից շատերը համամիտ էին Գայանե Մելքոմ Մելքոմյանի կողմից բերված այն փաստարկի հետ, որ հիշատակի օրերին անհրաժեշտ է շղթայական բնույթ կրող գովազդային վահանակները փոխարինել տվյալ օրվա խորհուրդն արտահայտող վահանակներով, ինչը չի արվում գովազդը ներկայացնող ընկերությունների կողմից:

Կալիպսո Բզնունու դիրքորոշմամբ վերը նշված առաջարկության տրամաբանությունը պետք է հիմնված լինի ոչ թե գների բարձրացման կամ ծավալի կրճատման վրա, այլ կոնկրետ վայրերում (օրինակ՝ ուսումնական հաստատությունների հարակից վայրերում, հասարակական հանգստի վայրերում) նշված բնույթի գովազդի արգելքով:

Մարգարիտա Դադյանը նշեց, որ գովազդի հետ կապված նշված սահմանափակումները պետք է կարգավորվեն օրենսդրությամբ: Այս կապակցությամբ

Գայանե Մելքոմ Մելքոմյանը փաստեց, որ օրինակ՝ ուսումնական հաստատությունների հարակից վայրերում գովազդի արգելքի հետ կապված որևէ օրենսդրական կարգավորում չկա:

Հովհաննես Աղաջանյանը չհամաձայնվեց գովազդի արգելքի կամ սահմանափակման հետ, նշելով, որ այդ դեպքում գովազդ ներկայացնող ընկերությունները կարող են գործել սև շուկայում:

Տիգրան Ավագյանը, համաձայնվելով Հովհաննես Աղաջանյանի բերած փաստարկի հետ, նշեց որ ավելի կարևոր են երիտասարդների ճակատագրերը, քան համայնքի բյուջե մուտք արվող գումարները:

Աննա Թովմասյանը շեշտեց, որ Խորհրդի կողմից պատրաստվող փաստաթուղթը պետք է միտված լինի կոնկրետ երիտասարդության ոլորտին, որում թիրախավորված կլինի ոլորտային ենթակառուցվածքների տարածքներում գովազդի բովանդակությունը և ծավալին վերաբերող տվյալները:

Գայանե Մելքոմ Մելքոմյանն առաջարկեց փաստաթղթում ներառել ոչ միայն 2021 թվականի վերը նշված տվյալները, այլ ներկայացնել համեմատական տվյալներ 2019-2021 թվականների միջև:

Անդրադառնալով օրակարգի հաջորդ հարցին՝ Խորհրդի քարտուղարը ներկայացրեց 2021 թվականի զարգացման ծրագրով նախատեսված երիտասարդության բնագավառի պլանը և տեխնիկական բնութագրի նախնական տարբերակը և առաջարկեց 2021 թվականի զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկից, ըստ առաջնահերթության և 2021 թվականի բյուջեով հաստատված միջոցների շրջանակում (3 միլիոն ՀՀ դրամ), առաջարկել առավել կարևոր միջոցառումների անցկացումը:

Քննարկման ընթացքում բազմաթիվ կարծիքներ հնչեցին առաջնահերթությունների մասով, որոնցից առավելապես հավանության արժանացան «Երևան համայնքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական կազմակերպությունների 10 նորարարական ծրագրերի ֆինանսավորում» և «Կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի լավագույն կամավորների պարգևատրման» միջոցառումների անցկացումը, ինչն արտացոլվեց նաև քվեարկության ժամանակ՝ 9 կողմ, 3 դեմ արդյունքով: Իսկ «Երևան համայնքի երիտասարդների կարիքների ուսումնասիրություն և հետազոտության արդյունքների հիման վրա Երևան քաղաքի

երիտասարդական քաղաքականության հնգամյա ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակում» միջոցառման անցկացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում նպատակահարմար չէ, քանի որ արդեն իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ ճգնաժամային այս իրավիճակում հետազոտության արդյունքներն իրատեսական չեն:

Օրակարգը սպառելուց հետո ժամանակ հատկացվեց հարց ու պատասխանի համար: Առաջարկով հանդես եկավ Տիգրան Ավագյանը, նշելով, որ շատ կարևոր է համարում Խորհրդի համագործակցությունը այլ քաղաքների նմանատիպ ինստիտուտների հետ, ինչն էլ խթան կհանդիսանա տարբեր քաղաքների հետ համագործակցության համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջարկն ընդգրկել հաջորդ նիստի օրակարգում:

Նաիրա Դարբինյանի առաջարկով քննարկվեց Խորհրդի աշխատանքներին՝ մասնավորապես Խորհրդի քարտուղարի գործառույթներին աջակցելու նպատակով ներգրավել Խորհրդի անդամներին: Խորհրդի քարտուղարը նշեց, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Խորհրդի անդամ Մարիամ Մարտիրոսյանը աջակցում է Խորհրդի նիստերի կազմակերպման աշխատանքներին՝ ապահովելով նիստերի փաստաթղթավորումը, իսկ Խորհրդի անդամ Աննա Թովմասյանը աջակցում է նիստերի հետ կապված տեխնիկական հարցերում: Նշեց նաև, որ լրացուցիչ աջակցության առկայության դեպքում ուրախ կլինի Խորհրդի ցանկացած անդամի մասնակցությանը կազմակերպական մասով, միաժամանակ կարևորելով Խորհրդի յուրաքանչյուր անդամի ակտիվ մասնակցությունը Խորհրդի կողմից նախատեսվող առաջարկները բովանդակային և համապարփակ ներկայացնելու գործընթացին, ինչի արդյունքում կարող է գնահատվել նաև Խորհրդի գործունեության արդյունավետությունը և ազդեցությունը որոշումների կայացման վրա:

Ծավալված քննարկումների արդյունքում՝ Գրիգոր Երիցյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում Խորհրդի անունից դիմել Երևանի քաղաքապետին 2022 թվականի բյուջեով երիտասարդության ոլորտին որոշակի միջոցներ տրամադրելու, համայնքային երիտասարդական կենտրոն հիմնադրելու, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքները, երիտասարդության ոլորտում որոշակի խնդիրների լուծման

նպատակով, օգտագործելու հարցերով: Ինչպես նաև կարևորեց որպես առանձին ստորաբաժանում Երիտասարդության հարցերի բաժնի ձևավորման հարցը:

Նիստի ավարտին քվեարկության դրվեց հաջորդ նիստի անցկացման օրը որոշելու հարցը: Խորհրդի քարտուղարն առաջարկեց հաջորդ նիստը գումարել 2021 թվականի սեպտեմբերի 23-ին, և մինչև այդ առցանց տարբերակով աշխատել վերը նշված բոլոր առաջարկների ներկայացման ուղղությամբ: Իսկ եթե այդ ընթացքում որոշումների ընդունման անհրաժեշտություն առաջանա, հնարավոր է գումարել արտահերթ նիստ: Խորհրդի հերթական նիստը 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կազմակերպելու վերաբերյալ հարցն ընդունվեց միաձայն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**